


Հ. ՍԱՀՅԱՆ



Ս  
ՈՒՆԱԿԱՆ  
ԶԵՆԻՏԻՍ

897. 99

21-15

7632

Ungaria 3m Sn

Արամայր Էղերջյն

In.

[illegible]

891.99

U-15

ՀԱՄՈՒՄԱՆ ՍԱՀՅԱՆ

ՍՏԱՆԳԱԾ Է 1961 թ.

# ՈՐՈՏԱՆԻ ԵԶԵՐՔԻՆ

4832

Խմբագրեց ՍՏ. ԶՈՐՅԱՆ



A 5925

ՀԱՅԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ \* 1946

Զով արա նրա կյանքին, հոր նման գգվիր  
անքուն,  
Դու հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ, Նաիրյան դաշար  
բարդի:

Ես երգիչ հրի, սրի, շահ չունեմ քո սիրուց զատ,  
Քեզ նման կանաչ կյանքով, քեզ համար ելած  
մարտի,  
Կմեռնեմ, միայն թե դու դարերում ազատ խշշաս,  
Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ, Նաիրյան դաշար  
բարդի:

## ԱՅՆՏԵՂ Է ՀԻՄԱ

Այնտեղ է հիմա հողիս թափառում,  
Ուր օրորվում է իմ նաիրյանը,  
Ուր ոլորվում է հին Ախուրյանը,  
Ուր իմ տոհմի սուրբ օջախն է վառվում:  
Այնտեղ է հիմա հողիս թափառում,  
Ուր գերեզմանն է քաջ Դավիթ բեկի,  
Ուր մահը մարդուն չի ահաբեկի,  
Ուր գիշերն անգամ արիին չի մարում:  
Բարձրաբերձ, կապույտ այն լեռնաշխարհում,  
Ուր շառանջում է Որոտանը հին,  
Որպես հավերժի կույս աստվածունհին,  
Այնտեղ է հիմա հողիս թափառում:

## ՍՏՎԵՐ ԴԱՌՆԱՄ


Ստվեր դառնամ՝ այս ծովերից ալեկոծ  
Նաիրական սեզ սարերը սլանամ,  
Ընկերանամ ծաղիկներին ոսկեզօծ,  
Կուրծքս նրանց արտասուքով լվանամ:

Գյաղքել սարին գգվեմ անափ քնքշանքով,  
Փարվեմ նրա կանաչ կրծքին հովի պես,  
Հովերի հետ դաշտերն իջնեմ Շուշանի,  
Ծանոթ արտիս արտուտներին գնամ տես:

Գնամ բացեմ, ուր որ մի դուռ լինի գոց,  
Սուփրի գլխին հացի նստեմ որպես տեր,  
Հովիվների խարույկներին դառնամ բոց,  
Գառնուկներին դառնամ ուրախ խաղընկեր:

Վտակ դառնամ՝ մեր խաս մարգերը ջրեմ,  
Ափիս վրա շվաք անի դեղձենին,  
Հարսանեկան հանդեսներում խառնվեմ  
Ավանդական մեր զուռնայի զիլ ձենին:

Գինի դառնամ գավաթներում զմրուխտի,  
Կենաց զարկին տոհմիս քաջերն իրար հետ,  
Եվ վառ պահեն հայրենական դրախտի  
Սուրբ օջախի անուշ կրակն առհավետ:



Դադարում եք միայն մարտում ահարկու,  
Ով թևավոր երազանքներ իմ հոգու:

## ՍԱՎԱՐԴ ՍԱՐԻՑ

Սավարդ սարից սրբնթաց,  
Նվիրանկան զնգոցով,  
Մի վտակ է դալիս ցած  
Ու սլանում դեպի ծով:

Բռնուններն են նրա քով  
Բացում զվարթ խրախճան,  
Միծաղում է ծիանքով  
Գարունքվա խառ-խալիչան:

Գիշերները քնքշագին  
Աստղիկներն են ցած գալիս  
Նվ ալդ վճիտ վտակի  
Զրերի մեջ լող տալիս:

Ասում են՝ ջուրն արծաթուն  
Արտասուքն է նրանց ծով:

(Այդ տատիկս էր հաստատում  
Յոթ նյապերիս անածով):

Ասում են՝ այն ջրում ջինջ  
Մի կռունկ է լողացել՝  
Ու պարզութունն իր աչքի  
Տվել նրան ու անցել:

Կռունկներ իմ թևարաց,  
Սալվարդ գնաք թե նորեն,  
Միմի փետուր նետեք ցած՝  
Իմ ողջույնի փոխարեն:

Լուրեր տարեք ինձանից,  
Տարեք երգն իմ անվրդով,  
Թռչուններ իմ, թռչուններ,  
Թե անց կենաք Սալվարդով:

Ասացեք այն վտակին,  
Որ պայծառ եմ նորից ես,  
Նորից պարզ է իմ հոգին  
Նրա բյուրեղ ջրի պես:

Նրա ջրում ի՞նչքան վառ  
Վատդիկներ են լողացել,

Նա պարզութունն իր անխառ  
Իմ սրտից է գողացել:

Վճիտ է իմ սիրտն, ասեք,  
Աչքի նման կռունկի,  
Նա զարկում է անեղերք  
Սիրով իմ մայր աշխարհքի:

Սալվարդ սարից սուղոցով  
Քամիներ են սուրում սառ.  
Տարեք նրանց սերն իմ ծով,  
Թե որ գնաք Սալվարդ սար:

## ՍԻՐՏՍ ԱՐԾԻՎ Է

Մանկության կապույտ մտերմուհիներ՝  
Մանուշակներ նուրբ ու կարոտագին,  
Իմ սիրտը թե որ ծիծեռնակ լիներ,  
Ձեզ այցի կգար այս վառ գարունքին:

Մանկության կանաչ մտերմուհիներ՝  
Մեր լեռնաշխարհի բարդիներ անգին,  
Իմ սիրտը թե որ արագիլ լիներ,  
Կգար, կնստեր ձեր դալար ճյուղքին:

Մանկության պայծառ մտերմուհիներ՝  
Անծայր արտերի հասկեր ոսկեվարս,  
Իմ սիրտը թե որ արտուտիկ լիներ,  
Կգար ու կերգեր ձեր երգը երազ:

Մանկության զվարթ մտերմուհիներ՝  
Չորալանջերի թփիկներ սիրուն,

Իմ սիրտը թե որ կաթավիկ լինեմ,  
Կգար, կըշրջեր ձեր խիտ ստվերում:

Սիրտս արծիվ է հողմաթե, հպարտ,  
Ռազմի բոցերում նա դեռ կճախրի,  
Նա ետ չի նայի ոչ մի ակնթարթ,  
Քանի բորբոք է մարտն այս վիթխարի:

## ኒዚቦቢኒ ጳጳሳዊና

Ամեն անգամ մարտից հետո, միջօրերին  
Թե գիշերով.

Մտվերացած անց եմ կենում, ծննդավայր, քո  
կիրճերով.

Քո լեռնային կածաններն են ուղորդում իմ  
քայլերի տակ.

Դեպ ան վայրերն, ուր հանգչում են մանուկ  
օրերն իմ կապուտակ:

ժայռերն ահա անմատչելի գահույթներից նայում  
են ցած,

Նրանք ձիեր են ինձ թվում արշավանքում  
արձանացած:

Նրանց գլխով թուխ ամպերի քարավանն է  
գնում-դալիս,

Իսկ ներքևում նվիրական Որոտանն է հորձան  
տալին:

Ո՛վ Որոտան, քո հզերքին աղջիկներն են արդ  
կաքավում,

Նրանց անտակ կարոտով է երբեմն էլ իմ սիրտը  
 ցավում:  
 Հազար գարնան հմայք ունեն սիրունները  
 Սյունյաց հողի,  
 Բայց նրանցից մեկն է միայն սիրտս մտել  
 գաղտագողի:  
 Ա՛խ, նրանցից մեկն է միայն, մերթ  
 փոթորկուն ու մերթ շվար,  
 Ստվեր դարձած շրջում ինձ հետ Կարպատների  
 փեշերն ի վար:  
 Կհասկանա հոգուս լեզուն ով զինվոր է ու  
 նավաստի,  
 Ով որ ինձ պես կարոտ մնաց հարսանեկան  
 առաքաստի:  
 Բայց ձեզ հետ է սիրտս խոսում, բարեկամներ  
 խոր թիկունքի,  
 Լողակիցներ, հողակիցներ, հպարտ տերեր նոր  
 Սյունիքի:  
 Եւ ձեզ մոտ եմ թողել նրան, պայծառաշյա իմ  
 սիրածին,  
 Հավատարիմ եղեք հավետ մեկտեղ կերած աղ  
 ու հացին,

Եղբայրություն արեք նրան, սիրեք նրան անմեղ  
 սիրով,  
 Չլինի թե, չլինի թե նայեք նրան խեթ աչքերով.  
 Թե լաց լինի ծով կարոտից, սիրտը նուրբ է՝  
 ներե՛ք նրան,  
 Ա՛խ, ջահել է, թե սխալվի՝ ուղիղ ճամփու բերեք  
 նրան:  
 Ձեր քեֆերում, ինձ հիշելիս, լուրջ նրան լիբը  
 դաւաթ,  
 Թե հավատը կորցնի հանկարծ, ներշնչեցեք  
 սիրո հավատ:  
 Միշտ հիշեցեք, որ այս հեռվում, Հայրենական  
 այս մեծ կռվում  
 Ես ձեր երգն եմ սիրով գրում, ես ձեր բախտն եմ  
 սրով կռում:

## ՈՐՈՏԱՆ

Փռվում է երկնի կապույտ քաթանը  
լեռների վրա ձյունագանգուր.

Վարում վշշում է խուլ Որոտանը,  
Ափերով տալիս ավազ ու ջուր:

Զրե՞րն են այսքան խենթ ու մոլեգին,  
Թե՞ դարնանային երկինքն է բաց  
Փլվել բարձրաբերձ լեռների գլխին  
եւ թավալվելով գալիս է ցած:


Մի անգսպելի, ահեղ տարափով  
Ալիքներն անթիվ ու անհամար  
Քար-քարափներից թռչում են թափով  
Սագերի նման սարսափահար:

Դեպի ծով կերթաւ դու մոլեգնաբար,  
Վիճելով վճիտ երկնքի հետ,

Դու բանաստեղծի հարազատ Լիբանիս,  
Հարազատ անուն, հարազատ դեմ:

Արձադանքների խոր ձորերի մեջ,  
Անդունդների մեջ թող որոտան,  
Շառաչիր, կանչիր, սլաղիր անվերջ,  
Ա՛խ, արար-վարար իմ Որոտան:

2698  
5925  
A



## ՈՐՈՏԱՆԻ ԵԶԵՐՔԻՆ

### 1. ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՆԵՐ

Որոտանի եզերքին կա մի ուռենի,  
Ա՛խ, նա սիրով սրտագին պահում է ճամփա,  
Հայացքը լուրթ ջրերին, ականջը ձայնի,  
Երազներով քնքշագին պահում է ճամփա:  
Այն վարսաթափ ուռենին, տխուր ուռենին  
Այս ուշ-մշուշ աշունքին պահում է ճամփա:  
Որոտանի եզերքին մի լույս աղավնի,  
Սրտում թախիժ ու մորմոք, պահում է ճամփա,  
Դաշտերն առած հայացքում, ականջը ձայնի,  
Ա՛խ, օրն ի բուն անշշուկ պահում է ճամփա:  
Այն քնքշաթև աղավնին, հրաշք աղավնին՝  
Աչքին գոհար արտասուք, պահում է ճամփա...  
Իմ մանկության ընկերներ պայծառ, երազուն,  
Սիրտս դիտե ձեր սրտի անուշիկ լեզուն,  
Ինձ եք մնում դուք անքուն, ինձ եք սպասում  
Որոտանի եզերքին, իմ Որոտանի...

## 2. ՀԱՐԱԶԱՏՆԵՐ

Որոտանի եղերքին, իմ Որոտանի  
Անմեղ-արտուտ մի աղջիկ պահում է ճամփայս,  
Մի ուրախ լուր ինձանից ո՞ւմ տամ, որ տանի  
Այն աղջկան, որ շա աշնան ամպի պես:  
Անցվոր ընկեր, քաջ ընկեր, կտրիճ պատանի,  
Կտառ բարովս նրան, թե որ հանդիպես,  
Արտու՞մ երազ ու մուրազ, մատին մատանի,  
Մայրամուտին թե ծեղին պահում է ճամփայս:  
Որոտանի եղերքին մայրս կարոտած,  
Վշտի մլարը դեմքին, պահում է ճամփայս,  
Արտասուքները՝ բարի աչքերում դապած,  
Հալարտ պատկերըս ձեռքին, պահում է ճամփայս:  
Նա, որ ինձ ծով քերշանքով օրոյք է տարել,  
Նա, որ կաթ է տվել ինձ, գզվել հովի պես,  
Նա, որ քարձիս տակ մի սուր դանակ է դրել,  
Որ կռվի մեջ աներեր, անաս լինեմ ես,  
Հիմա, ճամփեք իմ ծանոթ, կամուրջներ ծանոթ,  
Հողում կրակ ու կարոտ, պահում է ճամփայս:  
Որոտանի եղերքին հայրս ալևոր,  
Հայրենական անտառներ, դաշտեր քիչապես,  
Ավանդական իր սուրբեն բացում ամեն օր,

Գինու գավաթը բռնում, օրհնում է ճամփաս:  
Նա, որ կրծքիս տակ անվախ մի սիրտ է դրել,  
Նա, որ իմ մեջ հաղթելու հավատք է կռել,  
Ա՛խ, նա անքուն անդադար պահում է ճամփաս:  
Որոտանի եղերքին շիրիմն իմ պապի,  
Ոնց փառքի սյուն լուսավետ, պահում է ճամփաս,  
Նրա գլխին փիրուզյա կաճարդ կապիր,  
Մանկույթ երկինք, նա քեզ հետ պահում է ճամփաս...

Կարոտ գինին եք խմում վշտի գավաթով,  
Հարազատներ, իմ դարձին մնում հավատով—  
Որոտանի եղերքին, իմ Որոտանի...

### 3. ՆՎԵՐՆԵՐ

Որոտանի եղերքին մի աղջիկ սիրով  
Թաշկինակներ է կարում—ինձ համար նվեր,  
Նրանց ծայրին խնամքով ոսկեգույն թելով  
Խարիսխներ է նկարում—ինձ համար նվեր,  
Որոտանի եղերքին մի բարի պառավ  
Նուրբ գուլպաներ է դործում—ճամբի ինձ նվեր,  
Հիմա նստել է նա իմ հայացքին ծարավ,  
Նուրբ ձեռնոցներ է անում—ճամբի ինձ նվեր:

Որոտանի եղերքին մի ժիր ծերունի  
 Տաք զգեստներ է կարում—ճամբի ինձ նվեր,  
 Նա իր հոգում ինչքա՜ն բոց, ինչքա՜ն սեր ունի,  
 Նրա շնչով են ծաղկել պարտեզները մեր...  
 Որոտանի եղերքին մի հին ջաղացպան  
 Ճերմակ ալյուր է ալում—ճամբի ինձ համար,  
 Ա՛խ, մի բարի աչքեպան, մի ծեր աչքեպան  
 Անուշ մրգեր է քաղում—ճամբի ինձ համար  
 Որոտանի եղերքին մի ծանոթ հովիվ  
 Հոտից մի դառ է ջոկում—ճամբի ինձ համար...  
 Տար իմ ողջունս՝ նրան թևերով հովի,  
 Աշնանային երկնքի մթազնած կամար:  
 Որոտանի եղերքին մի հմուտ դարբին  
 Տքնում, պայտեր է կռում իմ ձիու համար,  
 Ա՛խ, նա ծեղից մինչև ծեղ աչքերն իմ ճամփին,  
 Ասպանդակներ է կռում իմ ձիու համար:  
 Նա, որ ջահել օրերում կտրուկ թուր առավ,  
 Վաղաչի մոտ, Դոնի մոտ հաղթանակ տարավ,  
 Հիմա հեռու, հեռավոր իր հին դարբնոցում  
 Կաշձակ թրեր է կռում—ճամբի ինձ նվեր...  
 Նվերներով ձեր անդին, ով մտերիմներ,  
 Դուք կռում եք փառավոր հաղթանակը մեր—  
 Որոտանի եղերքին, իմ Որոտանի:

#### 4. ՎԵՐԱԴԱՐՁ

Մեր հաղթութեան դարունքին, պայծառ դարուն-  
քին,

Բարեկամնե՛ր իմ անդին, ես կդառնամ տուն:  
Նորից զվարթ կժպտա ձեր տխրած հոգին,  
Հովե՛ր, հավթե՛ր քնքշադին, ես կդառնամ տուն:  
Զաղաչողանք ինձ կօրհնի, դարբինն ինձ կօրհնի,  
Մայրս սեղան կրանա յոթ օր, յոթ գիշեր,  
Այգեպանք ինձ կօրհնի, հովիվն ինձ կօրհնի,  
Հացրս հյուրեր կկանչի յոթ օր, յոթ գիշեր:  
Արար աշխարհ հյուր կգա իմ հարսանիքին,  
Արար աշխարհ կթնդա յոթ օր, յոթ գիշեր:  
Արևն ինչպե՞ս ոսկե հավթ իջած տանիքին,  
Սրտերի ճեղք կխնդա յոթ օր, յոթ գիշեր...  
Մեր արնոսոված դարունքը նորից կլանք կառնի  
Որոտանի եղերքին, իմ Որոտանի:

## ԳԱՐՆԱՆ ԿԱՐՈՏՈՎ

Ես քնդոեցում եմ դարուն այս տարի,  
Հեռու, անծանոթ դաշտախաչքերում,  
Լեռնալանջերում օտար աշխարհի:

Գարունն է ծաղկում հաղարաշքանի,  
Զմրուխտով զուգում անտառ ու արոտ,  
Խնչպես դարունը իմ Հայաստանի:

Նրդում են հավքերն այնպե՛ս սրտադին,  
Խնչպես բարձրաբերձ իմ Հայաստանում  
Հրաշք հավքերն են երգում դարունքին:

Զրերն են ահա երկնաչում, հոնում  
Այդպես են դարնանն իմ Հայաստանի  
Զանգակ աղբյուրներն իրար հետ խոսում:

Պայծառ է դարունն այստեղ, այս տարի,  
Բայց հրակվում է իմ հոգին դարձյալ  
Գարնան կարոտով իմ Հայաստանի:



Ինձ Գյաղթել սարի հովերն են կանչում,  
Ջրերն են կանչում իմ Որոտանի,  
Կմնա նրանց ձայնն իմ ալկանջում,  
Այս դժվար ճամփան ինձ ո՛ւր էլ տանի:

Ինձ շոբաններն են կանչում Սալվարդի—  
Խաղրնկերներն իմ հեքիաթ մանկության,  
Ինձ է երազում մի կանաչ բարդի—  
Բարձրացած բաղում իմ հայրենի տան:

Այս վառ գարունքին, հրաշք գարունքին  
Լսում եմ հեռվից դաշտայնի ընկրուն...  
Սյունյաց արտերի արտուտներն անդին  
Իմ սիրած երգերն ի՜նչ քաղցր են երգում:



ԳԼՈՒԽ Գ

Մուգ մանուշակներ Գյաղքելա սարի,  
Դուք իմ մանուշակ մանկության քույրեր,  
Կափուք կրկին դրախտի քույրեր,  
Մուգ մանուշակներ Գյաղքելա սարի...

Ես ձեզ տեսության իզամ այս տարի,  
Կրկնեմ պոչձառ հաղթության լուրեր,  
Մուգ մանուշակներ Գյաղքելա սարի,  
Դուք իմ մանուշակ մանկության քույրեր:

## ԴԱՌՆՈՒԿ

Այնտեղ, իմ հեռու Գլադբերգի լանջին,  
Շուշան ամպերի քնքուշ թևի տակ,  
Ունկնդիր զվարթ ջրերի կանչին,  
Մուշ-ժուշ Լրարածի դառնուկն ապիտակ:

Իմ հայրն է, ընտրել դառնուկն ապիտակ,  
Վզից զանդալներ կախել ոսկեդուչն,  
Ռը զոհի հոգնած իմ ոտքերի տակ,  
Երբ կռվում հաղթած վերադառնամ տուն:

## ՋԻԱՎՈՐԸ

էն ճիւղերն ա՛լ է, հասնի,  
էն խալու վրա,  
էն քաջ զինովորն ա՛լ է, հասնի,  
Հաղած զենք, զրաճ: Եւստ

— Կաթն լինի նրան հալալ,  
Ծաղկի, լիանա՛,  
Մատաղ լինեմ հոգուն զուլալ,  
Իմ տղան է նա:

էն որ էնպես զշի նման  
Թեին է տալի,  
Կրակ կտրած էն ճին՝ թառլան  
Չին է իմ բալի:

էն թուրը, որ խալու վրեն  
Կշողա անվերջ,

Սուրբ վրեժի լեզուն է, էն —  
Բալիս ձեռքի մեջ:

Մարտի հարսս թելեր ներկեց,  
Գործեց էն խալին  
Նվ նախշերի մեջ նկարեց  
Իմ Ռուստամ Ջալին:

Թշնամին էդ թուրը տեսավ,  
Մեռավ սարսափից:  
Բալիս վերջին գիրն ինձ հասավ  
Դանուբի ափից:

Գրում է՝ թե գիշեր-ցերեկ  
Կռիվ կթռնի,  
Որ գերմանը մեր դեմ երբեք  
Էլ թուր չբռնի:

Նրբ կարդում եմ դրերն անուշ  
Նրա զաւամի,  
Լենանում է սիրտս, դառնում  
Աշխարհքովս մի:

Մեռնեմ նրա թրին հրեղին

Ու ձիուն նրա...

Իմ քաջ-կտրիճ տղան է էն

Խառ խաղու վրա:

## ԾԽԱԽՈՏ

Ես անջատված եմ սիրուց, սիրուհուց,  
Արար աշխարհքից անջատված եմ ես,  
Զորս բուրբա լող ծովն է հինավուրց  
Մերթ աղետավոր, մերթ չքնադատես:

Դու ինձ կապում ես մայր ցամաքի հետ,  
Միտքս հեռավոր ափեր ես տանում,  
Ծխախոտ անուշ և բուրումնավետ,  
Դրա համար եմ քեզ փառաբանում:

Ամառվա շոգին, թե ձմռան ցրտին  
Անբաժան ես, ա՛խ, ինձնից անբաժան,  
Դու մարտից հետո իմ հոգնած սրտին  
Անդորրություն ես բերում անսահման:

Զանձրույթ-դեն ունի երեք թշնամի .  
Առաջինը այդ երգն է սրտադին,

Երկրորդը՝ կաթն է մեր սուրբ խաղողի,  
Երրորդը՝ դու ես, ծխախոտ անդին:

Իմ հոգու ձանձրույթն այրել ես քա՛նի,  
Քո սուրբ կրակում, անբոց, կրակում,  
Ես օրհնում եմ այն ձեռքերն անձկալի,  
Որ ջրել են քո թփիկներն անքում:

Հանգիստ բերելով ջղերիս հոգնած,  
Բուրիր ծխախոտ ու վառվիր անվերջ  
Պյոտր Կոշկայից ալանդ մնացած  
Նավաստիական ծխամորճիս մեջ:

## ԱՌՈՒՆ

Մեր Սալվարդա սարի լանջով  
Կգա առուն, կերթա առուն,  
Զվարթ կանչով ու կարկաշով  
Հեռվից կգա, կերթա հեռուն:

Ամեն առտու մայրս առվին  
Երկու կաթիլ արցունք կտա,  
Կարտա արցունքն առուն կանի,  
Կանի, կապույտ ծովը կգա:

Ինձ կթվա մայրս ինքն է,  
Երբ որ ծովը կըծիծաղի...  
—Մորս կարտա արցունքիցն է  
Մեր ծովի ջուրն աչսպես աղի:

Կարմիր նախապոստ

## ՀՈՐՈՎԵԼԸ

Իմ մանկությունը վաղուց կորել է,  
 վաղուց դարձել է հեքիաթ ու հուշ,  
 Բայց երբ հնչում է ձեր հորովելը,  
 Կրկին մանուկ եմ դառնում քնքուշ:

Սրտագին երգերն ինձ միշտ թավել են,  
 Հրճվանք են տվել ինձ թևավոր,  
 Բայց նվիրական ձեր հորովելը  
 Բոլոր երգերից ջինջ է ու խոր:

Ես ամենքի չափ կյանքը գտվել եմ  
 Ու հաշտ եմ ապրել իմ բախտի հետ,  
 Ա՛խ, հայրենաշունչ ձեր հորովելը  
 Կյանքի չափ քաղցր է և սիրավետ:

Ձեր փառքի համար փուշի չէ մեռնելը,  
 Իմաստուն հայրեր Սյունյաց երկրի,  
 Ձեր հորովե՛լը, ձեր հորովե՛լը,  
 Ձեր հորովե՛լը թող երկարի...

## ՔՆՔՈՒՇ ԱՄՊ

Սալվարդ սարի բարձունքին,  
Թե բաց արած քնքուշ ամպ,  
Հանգստացող հեռուներում այս կրկին  
Հիշում եմ քեզ տխրությամբ:

Մերթ երկնային ճամփեքով  
Սլացել ես ձիու պես...  
Ա՛խ, ինչքան եմ երազել  
Քո հեծվորը դառնալ ես:

Մերթ աղջիկ ես դարձել դու,  
Սափորն ուսին իջել վար՝  
Կույս աստղերին ջուր տանես  
Որոտանից իմ վարար:

Հիշել եմ քեզ ամեն օր  
Կովի դժար ճամփեքին.

Անջամաման քաղցր ցավով  
Շատ է ցավել իմ հոգին:

Քո թևի տակ, հովի տակ  
Քո դեղաշուք վրանի՝  
Խաղաղություն են ծխում  
Օջախներն իմ հայրենի:

Խաղաղություն ծոխն իմ դուռ  
Այդպես առած բոլոր ձևեր—  
Մեր հաճապեա Սալվարդի  
Ծխամորճից ելած վեր:

## ՄԵԴՎԱՐՈՒՅԾԸ

(«Հանդիպումներ» շարքից)

Դառնություններ շատ ես տեսել այս շորս  
տարում,  
Առ, բերանդ մի քիչ քաղցրացրու, տղաս,  
Հետո զրոնց անենք: Հոգիս շատ էր տխրում,  
Բայց հավատում էի, որ դու մի օր կգաս:

Ես հավատում էի, որ դու մի օր կգաս,  
Եվ դու եկար ահա, եկար ու ինձ գտար,  
Եկար, արևի պես շողշողացիր վրաս,  
Արևի պես այսօր մեղվանոցս մտար:

Բաժանում եմ ահա ինչ կա իմ հարկի տակ,  
Թող իմ մառաններում դատարկութուն ախրի,  
Միայն մարդուս հոգին թող չլինի դատարկ,  
Միայն սիրտ ունենա, որ հավիտյան սիրի:

Պատրա սրտիս նման բայ եմ արեւ տէս,  
Կանչի՛ր, ով ինչ կուզի թող առնի ու դնա...  
Թող ինձ սիրտս մնա քեզ սիրելու համար,  
Քեզ օրհնելու համար միայն լեզուս մնա:

## ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ ԵՐԿՈՒ

Ես չեմ թեքվել քո օրոցքին,  
Քեզ չեմ երգել օրոր,  
Բայց կրակում է իմ հագին  
Կարոտ մի անասվոր:

Ա՛խ, քեզ համար չեմ բերել ես  
Ոչ մի թանկ խաղալիք,  
Առանց ինձ ես եկել հանդես,  
Դու, իմ արտուտ բալիկ:

Մեծացել են ծառեր քանի,  
Մեծացել ես և դու...  
Արդեն գիտես ինչքան կանի  
Երկու անգամ երկու:

Ասում են թե, իբրև մաշիս,  
Քո ծաղկավոր շորում՝  
Դու ամեն օր ման ես դալիս  
Ծիծեռնակի ձորում:

Շատ ես սիրում անձրև ու ամպ,  
Երգ ես սիրում մեկ էլ,  
Հսել եմ, որ դու բնությամբ  
Հայրիկիդ ես եկել:

Երբ լսում եմ ձայնդ՝ ականջով  
Իմ հայրական հոգու,  
Խորանում է կարոտս տանջող  
Երկու անգամ երկու:

Սնջատում են մեզ քանի լիս,  
Քանի անտառ ու ծով,  
Բորբոքվում է հրդեհը դեռ  
Մի նոր դաժան բոցով:

Ո՛վ իմանա երբ կգամ ես...  
Բալց հավատա, բալիկ,  
Որ այս հեռվից կբերեմ քեզ  
Մի լավ, մի լավ դալիք:

Կբերեմ քեզ կշառքն իմ դալար,  
Երգն՝ իմ կրակ հոգու  
Նվ կարոտս դուժա՛լ, զուլալ  
Երկու անգամ երկու:

## ԵՐԵԽԱ ԵՄ ԴԵՌ

Իմ դարնան օրերն էլ ետ չեն դալու,  
Կյանքիս ամառն է բացվում լիաձեռ,  
Ու թեև շուտով հայր եմ դառնալու,  
Բայց հորդս համար երեխա եմ դեռ:

Մտքի անժանոթ ափերն եմ գնում,  
Դեմս արվեստի ճամփաներն են կեռ,  
Գիտունների հետ դավաթ եմ բռնում,  
Բայց հորդս համար երեխա եմ դեռ:

Ա՛խ, թե կարկաչեն երգերս անվիշտ,  
Իբրեւ լեռնալին աղբյուրների անմեռ,  
Ես երեխա եմ մնալու ամիշտ,  
Ինչպեհ հորս համար երեխա եմ դեռ:

## ՔԱՐԵ ԱՐՄԻՎՐ

Ահա թերեքը ուր,  
Ահա թերեքը խողոր,  
Սուրբ է հողն այս ամերուս  
Սուրբ են քարերը բոլոր:  
Բայց մի քար է կախարդում  
Ամենից շատ իմ հողին,  
Հրաշակերտ մի արձան  
Գիժ թերեքի եղերքին:  
Նա արծիվ է կենդանի,  
Կանգնած այս թմբի վրա,  
Բայց քարից է գլուխը,  
Քար են թևերը նրա:  
Ես նայում եմ հիացած,  
Չեմ հավատում իմ աչքին,  
Մարդ, կհասնե՞ր ցնորքդ  
Այս քարեղեն հրաշքին:  
Միտք եմ անում շվարած,

Հարցմունք անում ինքս ինձ,  
 Նա հողի՞ց է դուրս եկել,  
 Թե՞ սկսկվել է երկնքից...  
 Արդյոք քա՞ր է հրաշքով  
 Ուրտնեռից եկել ցած,  
 Թե՞ վիթխարի մի արծիվ  
 Խոլ խոչանքում քարացած:  
 Խարըսխված է նա հողին  
 Մադիչներով իր հզոր,  
 Այս արծվի մոտ արծիվը  
 Կթվա մի շնչին լոր:  
 Այսպես, պատրաստ թռչքի,  
 Այս ամերում արևիս  
 Նա մի անհայտ նավաստու  
 Սիրանքներին է վկա:



Երբ մեր արյան թշնամին  
 Այս եղերքներն է հասել,  
 Մի հայ կտրիճ նավաստի  
 Ահեղ մարտ է սկսեց:

Նա թողել է իր նավը  
Եվ վիճակներն<sup>1</sup> արևոտ,  
Սակայն ծովն իր կրծքի սլակ  
Բերել է այս քարի մոտ:  
Նա բերել է անսահման  
Լայնությունները ծովի  
Եվ փոթորիկն ահավոր  
Իր ծովային կորովի...



Օղակել է թշնամին  
Այս բարձունքն ու նավաստուն,  
Սոսափել են կակիծով  
Կաղնիները հաստաբուն:  
Բայց նավաստին, նավաստին —  
Մնացել է աներեր,  
Նրան այցի են եկել  
Ծանոթ քնքուշ սովերներ...  
Սիրած աղջիկն է եկել՝

---

<sup>1</sup> Ծովադրոշ:

Ստվերացած, նրա մոտ,  
Եվ ընկերները բոլոր,  
Եվ առաքանստն արշունոտ:  
Ու խոսել են. —

— Մեր սիրուն  
Թե մնացիր արժանի,  
Ոչ մի աղետ, ոչ մի հողմ  
Մեզնից քեզ չի բաժանի:  
Եվ նավաստին կայծակի  
Մոլեգին թափն առած փոխ,  
Ջայն է տվել.

— Ոտքիս տակ  
Ամուր մնա, պապիս հող:  
Երեք հարյուր են դալիս,  
Երեք հազար թող դառնան,  
Նրանց ճամփից կսրբեմ  
Ինչպես հեղեղը դարնան:  
Թող մոտենան, թող սողան  
Հրեշները երկաթի,  
Նրանց հրին կառամ ես  
Իբրեւ ծվեններ լաթի:  
Եվ կրակ է բաց արել  
Նավաստին աչն անանուն,

Գնդակով ու նռնակնով  
Հալածել է թշնամուն:  
Ու կարծել է թշնամին  
Թե այդ կախարդ քարի տակ  
Գրահի է պատրաստվում  
Մի զինավառ դամարտակ:  
Սարաափել է նա սասափել,  
Խուճապահար փախել ետ...  
Մնացել է քարձուներին  
Նավանափին այս քարի հետ:



Ասում են թե այդ ժամին  
Այս քարն առավ արծվի թև,  
Կենդանացավ հրճվանքից,  
Առավ մարմին, շունչ ու ձև:  
Ուղեց տունի վերավոր  
Նավաստուն իր թևերին,  
Թանի, քրքրի, հալածի  
Գերման դաժան դեերին,  
Թշնամական գիշատիչ  
Անդդներին ծվատի,

Արտուտներին մեր անմեղ  
Նրա՛նց ճանկից աղատի . . .



Ո՛ւր է հիմի նավաստին,  
Ախ, պատանին այն հպարտ,  
(Բախտի լեզուն մարտերում  
Ձի հասկացել ոչ մի մարդ):  
Գուցե՞ մեռած է . . . գուցե՞  
Այս ահավոր դիշերին  
Նորից կովի է թռչում  
Կարպասաների փեշերին:  
Ո՛ւր է հիմա արդյոք նա,  
Ո՛ր աստղի տակ, ո՛ր երկնի . . .  
Քար արծիվն այս թռչ նրա  
Փառքի արձանը լինի:

## ՄԱՆԿԱՌԹՅՈՒՆ

Զմրուխտ անտառներ, լեռներ երկնաքարձ  
Եվ կապույտ պատկեր իմ հայրենի տան,  
Զեր գլխով իր թուխ թևիկները բաց  
Թռավ տրտուտն իմ քնքուշ մանկության:

Ամեն արտի մոտ թռչած մի փետուր,  
Նա թռավ դեպի ծովերը վրդով...  
Ես վերջին անգամ բարձրացա կտուր,  
Կանչեցի նրան անամոք սրտով:

Կանչեցի, սակայն ինչքան մնացի,  
Ոչ մի ձայն չեկավ իմ ձայնի վրա:  
Եկել եմ նորից այս վայրերն այցի  
Եվ փետուրներն եմ որոնում նրա:

Խնդիրք եմ անում հովին ու հավքին,  
Փրփուր ջրերին հարցմունք եմ անում...

Չեմ դանում ոչինչ, և նույն քնքշագին  
Կարոտներն եմ իմ սրտի մեջ տանում:

Բայց երբ իմ զվարթ մանուկն է լալիս՝  
Իր ձեռքից թափ արտուտի համար,  
Սիրտս դանում է մի կանաչ մայիս,  
Եվ ծաղկում են իմ հույզերն անհամար:

Կարծես թե ես եմ մանուկն՝ այդ դանդուր—  
Սիրահար հավքի, ծաղկի, թփերի,  
Եվ բնությունն ինձ պահել է թաքուն,  
Որ նորից սիրով լույս աշխարհ բերի:

Կարծես թե ես եմ մանուկն՝ այդ կայտառ,  
Նստել եմ դարնան թավիշ կանաչում.  
Մթնում կորչում են արահետ ու ծառ,  
Եվ մայրս՝ կրկին ինձ տուն է կանչում:

Չեղ հետ եմ նորեն, անտառներ մթին,  
Օջախ ու կտուր իմ հայրենի տան,  
Եվ ման՝ է գալիս ձեր երգը շրթին՝  
Չքնաղ պատկերն իմ կապույտ մանկության:



Գնամ՝ մանկական սրինգս փնտրեմ  
Զոքանների մոտ Գյաղթելա սարի,  
Կանաչ ճամփեքով Սյունյաց աշխարհի  
Գնամ մանկական սրինգս փնտրեմ . . .  
Հովիկն իմ հոգուն խաղընկեր ընտրեմ  
Ու նրան խնդրեմ սրինգս ճարի . . .  
Գնամ՝ մանկական սրինգս փնտրեմ  
Զոքանների մոտ Գյաղթելա սարի:

## ԿԱԿԱԶ

Ասում են թե՛ հովը մի օր  
Հարցմունք արավ կակաչին .  
— Դու ի՞նչու ես այդքան կարմիր,  
Այդ ի՞նչ սև է քո միջին:

Կակաչն ասավ . — ուրախ էի,  
Թերթերս էին սպիտակ,  
Բողբոջում էր սիրտս սիրով  
Գարնան շուշան ամպի տակ:

Մի վիրավոր եղնիկ անցավ,  
Արյունն ընկավ իմ շրթին,  
Եվ սգավոր նրա սրտի  
Սևը մնաց իմ սրտին:

## ԿԱՆՉ

Անց կացաւ օրըս, արևաւորըս,  
Դու ե՛րբ ես գալու, իմ թևաւորըս,  
Իմ թուխ արտուտըս, իմ սիրուն լորըս,  
Իմ հեռաւորըս, դու ե՛րբ ես գալու:

Բացել եմ դուռըս, բացել եմ դուռըս,  
Խո՛րն է կարոտըս, խո՛րն է մրմուռըս,  
Իմ կանաչ կուռըս, իմ ծաղկած նուռըս,  
Իմ քնքուշ քույրըս, դու ե՛րբ ես գալու:

Գարունքվա հավք եմ, դրախտն է բունըս,  
Առանց քեզ ի՛նչ է երգըս, անունըս,  
Փախել է քունըս, կանչում եմ տունըս,  
Խանդուծ խաթունըս, դու ե՛րբ ես գալու:

## ԵՂՆԻԿ

Ամեն գարնան մեր սարով,  
Հուզումներով ալեկոծ,  
Մի եղնիկ է սլանում  
Սիրտը կրակ, շուրթը՝ բույ:

Վերից երկինքն է նազում,  
Հովն է սուրում մի թևից,  
Սիրո եղնիկն է վազում—  
Երգիս նետը ետևից:

## ԵՐԳՍ ՍՐՏԱՅՈՒՆ ԵՄ ԱՍՈՒՄ

Ուլ ախրեկան, քեզ մի քնքուշ, անուշ անանուխ  
եմ ասում,  
Քո մտքերին նուրբ թելիկներ, քո աչերին թուխ  
եմ ասում,  
Ման ես դալիս նազիկ-նազիկ, կաքավի պես  
շորորալեն,  
Ամեն անգամ քեզ տեսնելիս, երգս սրտաբուխ  
եմ ասում:  
Դուն աղբյուր ես զով ու զուլալ, ջուրդ էս ինչ  
պաղ է հիմի,  
Սիրտս ավան վարդի կոկոն, սերդ վրան շաղ է  
հիմի,  
Մեր աշխարհը գարնան նախշուն, նվիրական  
բաղ է հիմի,  
Քեզ այդ գյուղալ բաղի միջին մի դալարուն  
շյուղ եմ ասում:

Քանի յարեւ քեզ մոտ եկան, ձեր տան մի օր  
Հյուր մնացին,  
Հեյրան եղան քո հոնքերին, բառ չգտան, լուռ  
մնացին,  
Քեզնից ոչ մի խաբար չառան, միտք արին, որ  
զուր մնացին.  
Սիրո պայծառ խոսքը ես քեզ բոլորից կանուխ  
եմ ասում:

Ծաղկանց մեջ ինձ ամենից շատ դուր է գալիս  
կարմիր լալեն,  
Ա՛խ, բլբուլն էլ ման է գալիս իր վարդ յարի  
սիրով լալեն,  
Ի՞նչ է ոսկին, գոհարն՝ ի՞նչ է, յար, քո սերը  
թանկ է լալեն,  
Քո կորուստի լճին թեքված սրտիս կանաչ ճյուղ  
եմ ասում:

Հայրենիքիս ծաղիկները բոլորն էլ ինձ դուր են  
գալիս,  
Ուր գնում եմ, աղջիկները լույս թափելով ջուր  
են տալիս,

Հավաքվել են նրանք էսօր՝ հարսանիքի լուր են  
տալիս...

Հարսանքիդ սուփրի դիսին ինձ բախտավոր  
աշուղ եմ ասում:

## ԱՐԱԶ

Դու ձեր Թարթառն ես խոր երկրպագում՝  
Թեքված նրա լուրթ ջրերի վրա,  
Եվ ահա քո ջինջ, քո պայծառ հոգում  
Երգի է փոխվում շառաշր նրա:

Ես Որոտանն եմ սիրում խենթությամբ,  
Սիրո արցունքը Սյունյաց սարերի.  
Ես նրա երգն եմ երգում անձկությամբ  
Չայնով քնարիս բոլոր լարերի:

Բայց, անգին Աշոտ, և Թարթառը ձեր,  
Եվ Որոտանը մեր գեղեցկաթով  
Տարբեր հուներով, ճամփեքով տարբեր  
Գնում, թափվում են Արազը մեր ծով:

Մեր նոր երգերն էլ ճամփեքով տարբեր,  
Համբույր թողնելով քարին, ավազին,  
Թող լափին տալով գնան, խառնվեն  
Հայոց քերթության հախուռն Արազին:

ԱՂԱՎՆԻ

Երգս աշխարհ եկավ մանկական ճիշով,  
Այս ուշ գիշերին փախաւ իմ քունը:  
Երգս աշխարհ եկավ դարունքվա շնչով,  
Ասեք, ի՞նչ դնեմ երգիս անունը:

Թե արտուտ դնեմ, հանդը կթռնի,  
Դատարկ կմնա նորից իմ տունը,  
Մի անսիրտ ուրուր նրան կբռնի,  
Այդպես բռնել են իմ մանկությունը:

Թե եղնիկ դնեմ, կերթա ձորը մութ,  
Եվ լաց կդառնա իմ խնդությունը,  
Ետեփց կընկնեն որսկաններն անդութ,  
Կխլեն նրա կանաչ դարունը:

Եկե՛ք, դարունքվա սարեր գեղանի,  
Աղավնի դնենք երգիս անունը,

Որ սիրածներիս նամակներ տանի  
Եվ վերադառնա նորից իր բունը:

Հալախարիմ է աղաւնին անվերջ,  
Նա չի ծվարում օտար բնի մէջ:

## Ո՛ՒՐ ԵՆ ԳՆՈՒՄ

Ո՛ւր են գնում այս ամպերը  
Թափառական ու երազուն,  
Բազմահմուտ իմ պապերը  
Հասկացել են նրանց լեզուն:

Իմացել են թե ո՛ր սարի  
Ամպն է անուշ անձրև բերում  
Եվ ո՛ր ամպը՝ զարհուրելի  
Կայծակ ունի իր թևերում:

Թեև կյանքն ինձ դեռ չի տվել  
Տարիքն ու փորձն իմ պապերի,  
Բայց կարող եմ ես գուշակել—  
Թե որ ամպը ինչ կբերի:

Սակայն մի ամպ կա երազուն,—  
Այդ տխրության ամպն է անտես,

Կախարդական նրա լեզուն  
Չենք հասկանա պապերս ու ես:

Երգից առաջ հոգուս սարին  
Իջնում է ամպն այդ անձանոթ,  
Եվ շգիտեմ՝ նա աշխարհին  
Անձրև կտա, թե լոկ որոտ:



# ՅԱՆԿ

|                                     |    |
|-------------------------------------|----|
| Նախըջան դաշար բարդի                 | 3  |
| Այնտեղ է հիմա                       | 5  |
| Ստվեր դառնամ                        | 6  |
| Սալվարդ սարից                       | 8  |
| Սիրտս արծիվ է                       | 11 |
| Նամակ ճակատից                       | 13 |
| Որոտան                              | 16 |
| Որոտանի եզերքին                     | 18 |
| 1. Մանկության ընկերներ              | 18 |
| 2. Հարազատներ                       | 19 |
| 3. Նվերներ                          | 20 |
| 4. Վերադարձ                         | 22 |
| Գարնան կարոտով                      | 23 |
| Ինձ Գյազըբել սարի հովերն են կանչում | 24 |
| Մուգ մանուշակներ                    | 25 |
| Գառնուկ                             | 26 |
| Զիավորը                             | 27 |

|                        |    |
|------------------------|----|
| Ծխախոտ                 | 30 |
| Առուն                  | 32 |
| Հորովելը               | 33 |
| Քնքուշ ամալ            | 34 |
| Մեղվաբույծը            | 36 |
| Երկու անգամ երկու      | 38 |
| Երեսա եմ դեռ           | 40 |
| Քարե արժիւլը           | 41 |
| Մանկություն            | 47 |
| ***                    | 49 |
| Կակաշ                  | 50 |
| Կանչ                   | 51 |
| Եղնիկ                  | 52 |
| Երգս սրտաբուխ եմ ասում | 53 |
| Արազ                   | 56 |
| Աղավնի                 | 57 |
| Ո՛ւր են գնում          | 59 |

Վ.Ֆ 00371, Պատվեր 339, Տիրաժ 3000. Տպագրական  
2 մամուլ. Հեղինակային 1,2 մամ.

Ստորագրված է տպագրության 1/11-1946 թ.

---

ՀՍՍՌ ԺԿՄ-ին կից Պոլիգր. և Հրատ. Վարչ. № 1 տպարան  
Երևան, 1946:

|                        |    |
|------------------------|----|
| Արամիս                 | 30 |
| Առաքել                 | 31 |
| Հարություն             | 32 |
| Քրիստոս                | 33 |
| Քրիստոսի մարմնավորումը | 34 |
| Քրիստոսի մարմնավորումը | 35 |
| Քրիստոսի մարմնավորումը | 36 |
| Քրիստոսի մարմնավորումը | 37 |
| Քրիստոսի մարմնավորումը | 38 |
| Քրիստոսի մարմնավորումը | 39 |
| Քրիստոսի մարմնավորումը | 40 |
| Քրիստոսի մարմնավորումը | 41 |
| Քրիստոսի մարմնավորումը | 42 |
| Քրիստոսի մարմնավորումը | 43 |
| Քրիստոսի մարմնավորումը | 44 |
| Քրիստոսի մարմնավորումը | 45 |
| Քրիստոսի մարմնավորումը | 46 |
| Քրիստոսի մարմնավորումը | 47 |
| Քրիստոսի մարմնավորումը | 48 |
| Քրիստոսի մարմնավորումը | 49 |
| Քրիստոսի մարմնավորումը | 50 |
| Քրիստոսի մարմնավորումը | 51 |
| Քրիստոսի մարմնավորումը | 52 |
| Քրիստոսի մարմնավորումը | 53 |
| Քրիստոսի մարմնավորումը | 54 |
| Քրիստոսի մարմնավորումը | 55 |
| Քրիստոսի մարմնավորումը | 56 |
| Քրիստոսի մարմնավորումը | 57 |
| Քրիստոսի մարմնավորումը | 58 |
| Քրիստոսի մարմնավորումը | 59 |
| Քրիստոսի մարմնավորումը | 60 |


Այս գիրքը պատկանում է Երևանի Մանկավարժական ինստիտուտին  
 Կապիտալի 11-12 համարի տնակին  
 Երևան, 1940 թ.

Երևանի Մանկավարժական ինստիտուտի գրադարան  
 Կապիտալի 11-12 համարի տնակին  
 Երևան, 1940 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0041898



4162 7 A.